



- 2022 թվականի սեպտեմբերի 16-ից 18-ը "Արմենիա Էքսպո 2022" 21-րդ ունիվերսալ տարածաշրջանային առևտրաարդյունաբերական ցուցահանդեսային ֆորումի շրջանակներում MAN Արմենիան անցկացրեց հայկական շուկայի համար նախատեսված MAN բեռնատարների նոր սերնդի հանդիսավոր շնորհանդեսը:

- MAN TGL, TGM, TGS և TGX շարքի նոր սերնդի շուկա դուրսբերումը MAN ընկերության ամենամասշտաբային և ամենահավակնոտ նախագիծն է վերջին երկու տասնամյակների ընթացքում:

MAN բեռնատարների նոր սերնդի համաշխարհային պրեմիերան կայացել է 2021 թվականի վերջին, Իսպանիայում:

- MAN բեռնատարների նոր սերունդը նախագծվել է՝ հաշվի առնելով վարորդի առավելագույն հարմարավետությունն ու անվտանգությունը:

- MAN բեռնատարների նոր սերնդի ամենակարևոր առավելություններից է անխափան աշխատանքի օպտիմիզացված ժամանակը և արդեն իսկ նախագծման մակարդակում ներառված հուսալիությունը:

«MAN Տրակ Էնդ Բաս» ընկերությունը պատրաստ է վստահելի գործընկերաձևով հաճախորդների համար և առավելագույն աջակցություն ցուցաբերել նրանց բիզնեսը հարմարավետ վարելու համար:

- Նոր MAN TGX-ն արդեն արժանացել է 2021 թվականի «Տարվա բեռնատար» միջազգային մրցանակին:

ARMENIA EXPO տարածաշրջանի գլխավոր ցուցահանդեսը վաղուց և հաստատապես հաստատել է ամենախոշոր, ամենահեղինակավոր, ամենասպասված և նշանակալի իրադարձության դիրքերը ոչ միայն Հայաստանի, այլև ողջ տարածաշրջանի ձեռնարկատիրական կյանքում:

Ամեն տարի ցուցահանդեսը միավորում է Հայաստանի, Ռուսաստանի, Իրանի, Վրաստանի, Չինաստանի, ԱՊՀ երկրների, Մերձավոր Արևելքի և Եվրոպայի խոշորագույն արտադրողներին մեկ հարթակի վրա՝ հնարավորություն տալով նրանց արժանիորեն և առավելագույն արդյունավետությամբ ներկայացնել իրենց արտադրանքը:

Հայկական շնորհանդեսին մասնակցել են MAN-ի 100-ից ավելի հաճախորդներ և մասնագիտացված մամուլի ներկայացուցիչներ:

MAN բեռնատարների նոր սերնդի շուկա դուրսբերումը դարձել է ընկերության ամենահավակնոտ և մասշտաբային նախագիծը վերջին երկու տասնամյակների ընթացքում: Նախագծին մասնակցել է 2100 աշխատակից, ծախսված ընդհանուր ժամանակը կազմել է 12,000,000 մարդ/ժամ: Միայն դիզայնի մշակումը տևել է 167,000 ժամ: Նախագծի շրջանակներում գրվել է 2,800,000 տող ծրագրային կոդ, ընկերության բոլոր ստորաբաժանումներում ինտեգրվել են անվանացանկի շուրջ 22,000 նոր



դիրքեր: Թեստային մեքենաները թեստ-դրայվների ժամանակ անցել են 4,000,000 կիլոմետր ճանապարհ:

7,5-ից 41 տոննա թույլատրելի քաշով TGL, TGM, TGS և TGX սերիաների MAN բեռնատարների նոր սերունդը սահմանում է նոր չափանիշներ՝ արդյունավետության և խնայողության, վարորդի հարմարավետության, անխափան աշխատանքի և հաճախորդի համար բիզնես վարելու հեշտացման շրջանակներում: Հենվելով MAN տեխնիկայի վրա՝ գնորդներն ի դեմս «MAN Truck & Bus» ընկերության ունեն վստահելի գործընկեր, որը ամուր կանգնած է սովորական տրանսպորտային միջոցներ արտադրողից ինտելեկտուալ, առաջադեմ տրանսպորտային լուծումներ մատակարարողի փոխակերպման ճանապարհին: Կարելի է ասել, որ MAN բեռնատարների նոր սերունդը ոչ թե մեքենաներ են, այլ համալիր առաջարկ, որը նոր չափանիշներ է սահմանում բեռնատար տեխնիկայի շուկայում և հիմնված է ամենաառաջադեմ թվային լուծումների վրա:

Բեռնատարների նոր սերնդի մշակման ամենավաղ փուլում MAN ընկերությունը դրա նախագծման գործընթացում ներգրավեց իրական հաճախորդներին և վարորդներին, որպեսզի հնարավորինս ամբողջական և հետևողականորեն իրականացնի լուծումներ, որոնք բավարարում են նրանց կարիքները պատրաստի արտադրանքի տեսակետից: Արդյունքում, այժմ յուրաքանչյուր գնորդ կարող է ասել նոր MAN-ի մասին՝ «Դա ուղղակի իմ բեռնատարն է», - հենց այս արտահայտությունը (Simply my truck) դարձավ մեքենաների այս հեղափոխական ընտանիքի կարգախոսը: Միննույն ժամանակ, նոր սերնդի բեռնատարները շարունակում են MAN լեգենդար մոդելների ավանդույթները, ժառանգում և նոր մակարդակի են դուրս բերում նրանց լավագույն հատկանիշները՝ հարմարավետություն, անվտանգություն, խնայողականություն, հուսալիություն, սպասարկման հարմարություն:

MAN մեքենաների նոր սերունդը արտադրության բնագավառում իրականացրել է հսկայական բարելավումներ: Նոր սերնդի շուկայական մեկնարկին նախապատրաստվելու համար ընկերությունը ներդրել է մոտ 100 միլիոն եվրո, իսկ լրացուցիչ 85 միլիոն եվրո ներդրվել է գլխամասային ձեռնարկության խցիկների ներկման նոր արտադրամասում: Նոր սերնդի MAN բեռնատարները հայկական շուկայի համար կարտադրվեն Մյունխենի և Կրակովի գործարաններում:

### **Վարորդի բացառիկ հարմարավետություն**

Վարորդների գոհունակությունը, մոտիվացիան և աշխատանքի արդյունավետությունը ցանկացած տրանսպորտային ընկերության գործնական հաջողության կարևորագույն բաղադրիչներն են: Իսկ MAN նոր սերնդի խցիկներում առավելագույն հարմարավետությունն ապահովված է տարբեր հասակի և ֆիզիկական կազմվածք ունեցող վարորդների համար: Վարորդի աշխատատեղը օպտիմալացվել է միջազգային կազմակերպությունների կողմից էրգոնոմիկայի ոլորտում իրականացված վերջին հետազոտություններին և չափումներին համապատասխան:

Արդեն խցիկ մտնելու պահին վարորդը կկարողանա գնահատել աստիճանների մտածվածությունը, դռան բացման անկյունը, դռան բացվածքի լայնությունը: Նրան



կդիմավորեն առողջության և կեցվածքի համար հարմարավետ և օպտիմալ նստատեղեր, բազմաֆունկցիոնալ ղեկանիվ՝ նոր, ընդլայնված կարգավորումներով, հարմար վահանակ և կառավարման սարքեր առավելագույն տեսանելիության և հասանելիության գոտում, հեշտ հասկանալի թվային համակարգեր և հանգստի հարմարավետ վայր: Նոր դիզայնն ապահովում է ավելի լավ տեսանելիություն և ամենալավ աերոդինամիկ պաշտպանությունն ադտոտումից, ջեռուցման և օդափոխության համակարգերը օգնում են արագ վերականգնել տեսանելիությունը սառցակալման կամ գոլորշապատման դեպքում: Դռների կարգավորող կոճակների MAN EasyControl համակարգը թույլ է տալիս կառավարել մեքենայի մի շարք գործառույթներ՝ առանց կրկին խցիկ բարձրանալու անհրաժեշտության: MAN SmartSelect համակարգը հնարավորություն է տալիս հարմար կերպով կառավարել մուլտիմեդիա, տեղեկատվական, նավիգացիոն և մի շարք այլ գործառույթներ՝ առանց հայացքը ճանապարհից կտրելու: Փոխանցման տուփի նոր ավտոմատ սելեկտորը տեղադրված է ղեկի սյունակի վրա, որը մեքենայի կայանման ավտոմատ արգելակման համակարգի հետ միասին (օպցիոնալ) հնարավորություն է տվել ապահովել խցիկում գրեթե մեկ քառակուսի մետր տարածք: Բազմաթիվ իրային մասնաբաժիններն ապահովում են վարորդի համար ավելի քան 1100 լիտր ուղեբեռի տարածք:

MAN Climatronic համակարգը ոչ միայն ավտոմատ կերպով պահպանում է ցանկալի ջերմաստիճանը, այլև նախատեսում է խցիկի հարմարավետ բաժանումը ջերմաստիճանային գոտիների՝ կլիմայի անկախ վերահսկման միջոցով: Երկար ճանապարհորդության մեջ գտնվող վարորդների համար հնարավորություն կա հարմարավետորեն հանգստանալ նախատեսված քնելու տեղում, որը հուսալի պաշտպանված է ադմուկից ու կողմնակի լույսից, իսկ անհրաժեշտության դեպքում ապահովված է լրացուցիչ ջեռուցիչով:

Երթևեկության անվտանգությունը պաշտպանվում է ժամանակակից օժանդակ համակարգերի մի ամբողջ փաթեթով, ներառյալ վարորդի ուշադրության վերահսկման համակարգը, շրջադարձերի անցման օգնականը, խցանումներում շարժման օգնականը և վերադասավորման օգնականը, վթարային արգելակման օժանդակ համակարգը, Stop & Go ֆունկցիայով ադապտիվ կրուիզ-կոնտրոլը, հեռակա լույսի օգնականը:

Այս հատկանիշներից յուրաքանչյուրն առաջարկում է հավելյալ առավելություն, համակցության մեջ նոր սերնդի MAN-ը դարձնում իդեալական վայր վարորդի աշխատանքի և հանգստի համար:

### **Բարձր արդյունավետություն և խնայողականություն**

MAN-ի նոր սերունդի բեռնատարները թույլ են տալիս արդյունավետ օգտագործել շարժիչի հզորությունն ու պտտող մոմենտը և սահմանում են նոր չափանիշներ՝ վառելիքի և AdBlue ռեազենտ հեղուկի խնայողության առումով:

MAN շարժիչների հայկական շարքը ներառում է գերազանց ներկայացած հուսալի ուժային ագրեգատների երեք ընտանիք, որոնք համապատասխանում են Եվրո 5 բնապահպանական ստանդարտին: Փոքր և միջին բեռնատարողության TGL



(ընդհանուր զանգվածը 7.5-12 տ) և TGM (12-26 տ) սերիայի համար առաջարկվում են թեթև և հուսալի չորս-մխոցանի կամ վեց-մխոցանի D08 շարժիչներ, որոնք կարող են ունենալ 160-ից մինչև 320 ձիաուժ հզորություն: TGX և TGS սերիաների համար հասանելի են ժամանակի ընթացքում ստուգված, ինչպես մայրուղիների, այնպես էլ շինհրապարակներում իրենց գերազանց դրսևորած 10,5 լիտրանոց D20 (320-ից մինչև 440 ձիաուժ) և առաջատար 12,4 լիտրանոց D26 շարժիչները, որոնք կարող են ունենալ 480 կամ 540 ձ. ու. հզորություն և հիանալի են երկար ճանապարհների և ծանր բեռների տեղափոխման համար: Շարժիչների ամբողջ տեսականին ունի Common Rail վառելիքի ներարկման համակարգ, ինչպես նաև արտանետվող գազերի չեզոքացման (սելեկտիվ կատալիտիկ վերականգնում) SCR համակարգ՝ կիրառելով AdBlue հեղուկը:

MAN Tipmatic 12 (բոլոր սերիաների համար) և MAN Tipmatic 6 (TGL) ռոբոտային փոխանցման տուփերը ապահովում են շարժիչի օպտիմալ աշխատանքի ռեժիմները ամենատարբեր պայմաններում: TipMatic 12 22 – 12 30 փոխանցման տուփերը հիանալի են մինչև 120 տոննա ընդհանուր զանգվածով ավտոգնացքի քարշակի դեպքում, իսկ տեղադրված հիդրոտրանսֆորմատորի դեպքում՝ հնարավոր է մինչև 250 տ ընդհանուր զանգվածով ավտոգնացքի քարշակի դեպքում: Ռոբոտացված փոխանցման տուփը կառավարվում է հարմար ենթադեկային անջատիչի միջոցով, ինչը բարելավել է վարորդի նստատեղի էրգոնոմիկան և վարորդից չի պահանջում ուշադրությունը շեղել ճանապարհից:

Բազմաթիվ բարելավումները և օպտիմիզացված աերոդինամիկ լուծումները ոչ միայն բարելավել են մեքենայի արտաքին տեսքը և նվազեցրել դրա աղտոտման հավանականությունը, այլև բարենպաստ ազդեցություն են ունեցել վառելիքի սպառման նվազեցման վրա:

### **Անխափան աշխատանքի օպտիմիզացված ժամանակ**

Բեռնատարի աշխատանքի չնախատեսված պարապուրդները և դրա հետ կապված ժամանակային ու նյութական կորուստները խնդիրներ են, որոնցից ցանկացած սեփականատեր կցանկանա ընդմիջտ ձերբազատվել: MAN մեքենաների նոր սերունդն այստեղ նույնպես իդեալական լուծում է: Առաջին իսկ օրվանից MAN բեռնատարները աշխատանքում ցուցադրում են իրենց ամենաբարձր որակը, ինչը դարձել է բրենդի հոմանիշ:

Այս հուսալիությունը հիմնված է բազմաթիվ գործոնների վրա: Նոր սերնդի մեքենաներում MAN ընկերությունը ձգտում է ստուգված որոշումները դարձնել էլ ավելի լավը, որպեսզի ապահովի ամբողջ տրանսպորտային մեքենայի երկարակեցությունը: Հուսալիությունը ներդրվում է արդեն իսկ նախագծման մակարդակում, ինչի օրինակն է նոր էլեկտրաճարտարապետությունը: Ավելի ճշգրիտ կոնֆիգուրացիայի հաշվին օգտագործվում են միայն ընթացիկ տրանսպորտային լուծման համար անհրաժեշտ բլոկները, որի հաշվին նվազում է ընդհանուր արժեքը և քաշը, իսկ հուսալիությունը բարձրանում է: Այս մեքենաների էլեկտրաճարտարապետությունը կառուցված է Ethernet անվաղողի հենքի վրա, որն ապահովում է ծայրամասային սարքերի առավելագույն արագությունը



(տեղեկատվության փոխանցման արագությունը մինչև 1 Գբ/վրկ՝ CAN-անվադողի 1 Մբ/վ-ի դիմաց):

Այնուամենայնիվ, եթե իսկապես վթարային իրավիճակ է ստեղծվում, MAN ընկերությունը միշտ կօգնի գտնել խնդրի արդյունավետ լուծման ամենակարճ ճանապարհը: Տեխնիկական սպասարկման թվային կատարելագործված համակարգը օգնում է կրճատել գործառնական ծախսերը և ապահովել նոր MAN TG ավտոմեքենաների վերանորոգման հնարավորինս առավելագույն արագությունը: Բազմաթիվ թվային գործառնություններ և ծառայություններ օգնում են շարժակազմի կայանների դեկավարներին և վարորդներին իրենց ամենօրյա աշխատանքում:

Այն հաճախորդների համար, ովքեր ցանկանում են ավելի մեծ ուշադրության արժանանալ տեխնիկայի արտադրողից, MAN ընկերությունն առաջարկում է սպասարկման պայմանագրեր: Կախված ընտրված փաթեթից, հաճախորդը ստանում է տեխնիկական սպասարկում կամ նույնիսկ լրացուցիչ վերանորոգման աշխատանքներ ֆիքսված գնով, որը կարող է ներառվել հաշվարկների մեջ:

### **«Ուժեղ գործընկեր»՝ իրավասություն և անհատական մոտեցում համագործակցությանը**

Մեքենաների նոր սերնդի գործարկումով MAN ընկերությունը ներկայացնում է տրանսպորտային միջոցի կոնֆիգուրացիայի նոր համակարգ, որն ամբողջությամբ կողմնորոշված է դեպի հաճախորդը: Օգտագործելով կոնֆիգուրատորի ձևուն հնարավորությունները՝ նոր MAN TGX, TGS, TGM կամ TGL-ը վերածում են մեքենայի, որը ճշգրտորեն համապատասխանում է տրանսպորտային առաջադրանքին:

Այդ մոտեցումը թույլ է տալիս օգտագործել տեխնիկական սպասարկման և ֆինանսավորման անհատական առաջարկներ, ինչպես նաև թվային ծառայություններ՝ այդպիսով ավտոմեքենան վերածելով համալիր տրանսպորտային լուծման, որը ստեղծվել է դիլերային կենտրոնում մեկ անձի կողմից: Բացի այդ, MAN Individual ծրագիրը առաջարկում է ընտրովի հավելումների լայն հավաքածու, ինչը թույլ է տալիս դեռ գործարանում ադապտացնել ավտոմեքենան՝ հաճախորդի հատուկ ցանկություններին: Փաստորեն, ստեղծվում է ապրանքային շաքք, որն ավելի ամբողջականորեն համապատասխանում է շուկայի պայմաններին և հաճախորդների պահանջներին և ներառում է ավտոմեքենաների ընտանիք, հետվաճառքային սպասարկում և ֆինանսավորում, ինչպես նաև թվային ծառայություններ:

### **Simplifying Business**

MAN բեռնատարների նոր սերնդի բոլոր թվարկված առավելությունները ոչ միայն ապահովում են տեխնիկայի երկարաժամկետ անխափան աշխատանքը և ընկերությունը դարձնում վստահելի գործընկեր հաճախորդի համար, այլև թույլ են տալիս հաճախորդներին իրենց բիզնեսը ավելի հեշտ և օպտիմալ վարել: Որքան ճշգրիտ է բեռնատարը համապատասխանում սեփականատիրոջ անհատական պահանջմունքներին, այնքան ավելի կայուն և արագ կարվի աշխատանքը: Այդ իսկ պատճառով MAN-ի մասնագետները պատրաստ են հաճախորդի համար «անձնական» դարձնել MAN-ի ցանկացած բեռնատար, որը ունակ է կատարել այն ամենը, ինչ անհրաժեշտ է հաճախորդին առօրյա աշխատանքում: